



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Սիսիանի հ. 2 հիմնական դպրոց

Թեմա՝ Սովորել սովորելու կարողունակության ձևավորումը տարրական
դասարաններում:

Վերապատրաստող, մենթոր՝ Արմինե Մեծրիցյան

Ուսուցիչ՝ Յողիկ Արշավիրյան

Սիսիան - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----- 3

Գլուխ 1. Կարողունակությունները որպես հանրակրթության նոր չափորոշիչի հենասյուններ

1.1. Կարողունակություն (կոմպետենցիա) հասկացությունը-----5

1.2. Կարողունակությունների վրա հիմնված կրթակարգերի
առանձնահատկությունները ----- 7

1.3 Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված
կարողունակությունները -----8

Գլուխ 2 Սովորել սովորելու կարողունակությունը եվ դրա ձևավորումը տարրական դպրոցում

2.1. Սովորել սովորելու կարողունակության նկարագրիչները -----11

2.2. Սովորել սովորելու կարողունակությունը ձևավորող վերջնարդյունքները
-----12

2.3. Ինչպես ձևավորել սովորել սովորելու կարողունակություն -----13

Եզրակացություն -----21

Օգտագործված գրականություն -----23

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

«Կարողունակություն (կոմպետենցիա)» եզրույթը մանկավարժական գրականության մեջ սկսել է շրջանառվել անցած դարի 70-80-ական թվականներից, երբ արևմտյան երկրներում և ԱՄՆ-ում սկսեցին լրջորեն քննադատել կրթության նպատակներն ու բովանդակության ձևավորման մոտեցումները: Արագ փոփոխվող կյանքը, գիտության և տեխնիկայի շարունակական աճը մասնագետներից պահանջում էին աշխատանքային շուկային արագ հարմարվելու ճկունություն: Ամերիկյան հետազոտողները պարզեցին, որ շատ հաճախ մարդկանց ինտելեկտի բարձր աստիճանը մասնագիտական գործունեության ժամանակ մնում է չիրացված: Այդ ժամանակներում լայն տարածված IQ թեստերը, որոնցով չափում էին մարդու իմացական մակարդակը, չէին երաշխավորում նրա մասնագիտական հաջող գործունեությունը: Թեստը տալիս էր բարձր արդյունք, մինչդեռ իրական կյանքում մարդը ցածր արդյունավետությամբ էր աշխատում: Ամերիկացի հետազոտողները կատարեցին բարձր արդյունավետության հասած մարդկանց վարքի, գործունեության ուսումնասիրություններ և արդյունքում ձևակերպեցին նրանց ընդհանրությունները միավորող որակների համալիր խումբ, որն անվանեցին կոմպետենցիա:

Թեմայի արդիականությունը:

Այդ ժամանակ արդեն իսկ պարզ դարձավ, որ միայն նեղ առարկայական դաշտում գիտելիքների հաղորդումը և հմտությունների ձևավորումը բավարար չէ, այլ անհրաժեշտ է հանրակրթության նպատակների առավել լայն գիտակցում: Հանրակրթական համակարգին նոր պահանջներ սկսեցին թելադրվել գործարար շրջանակներից: Դրա պահանջն առաջացավ հատկապես աշխատանքային շուկայի կառուցվածքի փոփոխությամբ: Պարզ դարձավ, որ հանրակրթությունը պետք է ձևավորի այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր անհատի արագ փոփոխվող հասարակությունում հաջողությամբ կազմակերպելու իր առօրյա կյանքն ու գործունեությունը: 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին առանցքային կարողունակությունների ձևավորմանը նպատակաուղղված կրթական ծրագրեր սկսեցին կառուցել արագ զարգացող նորարարական տնտեսություններ ունեցող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ֆինլանդիան, Ավստրալիան, ԱՄՆ-ի առանձին նահանգներ, Կանադան, Իռլանդիան, Սինգապուրը: Ավելի ուշ այդ շարժմանը միացան Չինաստանը, Ճապոնիան, Գերմանիան, Հոլանդիան, Լատինական Ամերիկայի և հետխորհրդային երկրները: Հետևելով զարգացման ընդհանուր միտումներին՝ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր մշակութային, պատմական, սոցիալ-ժողովրդագրական, տնտեսական առանձնահատկություններից, այդ ուղղությամբ շարժվում է իր նախընտրած ճանապարհով: Չնայած այս հարցում միասնական մոտեցումը բացակայում է, սակայն մի բան հստակ է՝ առանձին առարկաների բովանդակության վրա կառուցված կրթական մոդելն իր դիրքերն արագորեն զիջում է առանցքային կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելին: Բոլորի համար պարտադիր պահանջների շարքում նեղ առարկայական գիտելիքներից և գործնականում դրանք

կիրառելու կարողություններից բացի, որոշիչ դեր են սկսում խաղալ համապիտանի կարողունակությունները, որոնք աստիճանաբար դառնում են համընդհանուր գրագիտության պարտադիր բաղադրատարրեր¹: Ինչպիսի՞նք հասարակությունում են ապրելու մեր երեխաները վաղը: Այս հարցի պատասխանի կարևոր մասը ընկած է այն կրթության մեջ, որ նրանք այսօր ստանում են: Կրթությունը կարևոր դեր ունի ապագայի ձևավորման գործում և արտացոլում է աշխարհի այն տեսակը, որն ուզում ենք ստանալ հետագա սերունդների համար: **Հետազոտության նպատակն է նպաստել տարրական դասարաններում սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը՝ կիրառելով ուսուցման արդյունավետ հնարներ և մեթոդներ: Հետազոտության խնդիրները.**

- Ծանոթանալ հանրակրթության պետական չափորոշիչին, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնին, ուսումնական պլաններին:
- Ուսումնասիրել սովորել սովորելու կարողունակության նկարագրիչները:
- Կիրառել սովորել սովորելու կարողությունը ձևավորող գործիքներ և հնարներ:
- Գրանցել վերջնարդյունքները, աշակերտներից ստացած հետադարձ կապը:

Վարկածը: Ես ենթադրում եմ՝ եթե մենք կրթական գործընթացը կազմակերպենք այնպես, որ աշակերտների մոտ ձևավորվեն նախատեսված կարողունակությունները, ապա աշակերտները ինքնուրույն կկարողանան ստեղծել աշխարհի իմաստային պատկերը, որն իրենց կօգնի որոշումներ կայացնել անսովոր իրավիճակներում:

¹Универсальные компетентности и новая грамотность: от лозунгов к реальности. М.: Изд. дом ВШЭ, 2020.

Գլուխ 1

Կարողունակությունները որպես հանրակրթության նոր չափորոշիչի հենասյուներ


1.1. Կարողունակություն (կոմպետենցիա) հասկացությունը

Կարող եք մի օր ուսանողին դաս տալ,
բայց եթե նրան սովորեցնեք սովորել՝ ստեղծելով հետաքրքրասիրություն,
նա կշարունակի ուսման գործընթացը իր ողջ կյանքի ընթացքում:

Կլեյ Պ. Բեդֆորդ:

Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:² Համաձայն այս սահմանման՝ եթե որևէ մեկը հավակնում է կարողունակ լինել որևէ բնագավառում, ապա նա պետք է տիրապետի այդ բնագավառին բնորոշ որոշակի գիտելիքների, հմուտ լինի այդ բնագավառում որոշակի գործունեություն ծավալելու, պետք է ունենա արժեքային որոշակի համակարգ և կարողանա իր դիրքորոշումն արտահայտել այդ բնագավառի որոշակի հարցադրումների, երևույթների վերաբերյալ:

²<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>: Էջ 3



Կարողունակությունը նշված բոլոր չորս որակների համատեղ առկայությունն է (գծապատկեր 1), և դրանցից որևէ մեկի բացակայությունը թույլ չի տալիս սովորողին կամ քաղաքացուն հաջողությամբ լուծելու իր առջև ծառացած խնդիրները: Կարողունակությունը չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված որևէ արդյունք: Վերջինիս ձևավորումն անընդհատ գործընթաց է, որի ժամանակ այն անընդհատ կարող են կատարելագործվել: Կարողունակությունների ձևավորումը սկսում է վաղ մանկությունից և շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում: Եվրոպայի խորհրդի՝ ժողովրդավարական մշակույթի համար կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակի ելակետն այն համոզմունքն է, որ կրթական համակարգերի, դպրոցների ու համալսարանների հիմնական առաքելություններից մեկը պետք է լինի նախապատրաստումը ժողովրդավարական քաղաքացիությանը: Սա նշանակում է հետևել, որ սովորողներն իմանան և հասկանան իրենց առջև ծառացած մարտահրավերները և իրենց որոշումների հետևանքները, թե ինչ են իրենք ի վիճակի անել և ինչ չպետք է անեն: Այս ամենի համար նրանց անհրաժեշտ է ոչ միայն գիտելիք, այլ նաև համապատասխան կարողունակություններ(կոմպետենցիաներ), և այս շրջանակի նպատակն է սահմանել, թե որոնք են այդ կարողունակությունները: 20 կոմպետենցիաները խմբավորված են ըստ չորս ոլորտների՝ արժեքներ, վերաբերմունք, հմտություններ, գիտելիք ու քննադատական ըմբռնում: Դրանք ուղեկցվում են մոդելի նախապատմությամբ, ինչպես նաև տեղեկություններով, թե ինչպես է այն մշակվել եւ ինչպես է նախատեսվում կիրառել:³ Հանրակրթության պետական նոր չափորոշիչի հիմքում

³<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>: Էջ 3

ընկած է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը: Կրթության բովանդակությունը կառուցվում է համաձայն հետևյալ ստորակարգային սխեմայի: Չափորոշով որպես հանրակրթության գերագույն նպատակ սահմանվել է ութ առանցքային կարողունակությունների ձևավորումը: Այնուհետև ձևակերպվել են դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Դրանք այն վերջնարդյունքներն են, որոնք կոչված են ձևավորելու առանցքային կարողունակությունները: Որպեսզի այդ վերջնարդյունքները հասանելի լինեն, ձևակերպվել են կրթության բովանդակային դաշտը տրոհող յոթ ուսումնական բնագավառները, այդ բնագավառները ներկայացնող առարկայացանկերի ձևավորման սկզբունքները, որոնց հիման վրա ներկայացվել է հենքային ուսումնական պլանը, որը ներառում է տարբեր ուսումնական բնագավառներին հատկացվող ժամաքանակների տոկոսային համամասնությունը: Համաձայն նոր չափորոշի տրամաբանության՝ դպրոցի տարբեր աստիճանների շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները պիտի ուղենիշ հանդիսանան առանձին առարկաների չափորոշիչների և ծրագրերի մշակման համար, որոնց հիման վրա էլ պետք է ստեղծվեն համապատասխան դասագրքերն ու ուսումնական այլ գրականությունը:

1.2. Կարողունակությունների վրա հիմնված կրթակարգերի առանձնահատկությունները

1. Ուսումնական առարկաների վրա հիմնված կրթակարգերում սահմանվում են այն գիտելիքները, կարողությունները և արժեքները, որոնք պետք է սովորողը ձեռք բերի առարկայի ուսումնասիրության արդյունքում: Կարողունակությունների վրա հիմնված մոտեցման դեպքում առարկաները դիտվում են որպես գործիք առավել ընդհանրական որակներ ձևավորելու համար: Ընդ որում, որպես կանոն, այդ որակներից (կարողունակություններից) յուրաքանչյուրը ձևավորվում է մի քանի առարկաների ուսումնասիրության արդյունքում:
2. Կարողունակությունների վրա հիմնված մոտեցման դեպքում ուսումնական գործընթացը կազմակերպվում է այնպես, որ հնարավորինս նպաստի սովորողի այն գիտելիքների,

հմտությունների, դիրքորոշման և արժեքների ձևավորմանը, որոնց սովորողը առնչվում է իր առօրյա և ուսումնական գործունեությունը կազմակերպելիս:

3. Այս մոտեցումն առավել բարձր պահանջներ է առաջադրում դասավանդողներին, քան թեմատիկ ուսուցման դեպքում է:

4. Այս մոտեցման դեպքում կրթության բովանդակությունը ձևավորվում է կարողունակությունների հենքի վրա, այլ ոչ թե առանձին առարկաների: Հաջողությունը պայմանավորված է կարողունակությունների, այլ ոչ թե առանձին առարկաների յուրացմամբ:

Կարողունակությունների վրա հիմնված կրթական համակարգերը կարևորում են այն, որ սովորողները կարողանան կիրառել ձեռք բերված գիտելիքները և հմտությունները նոր համատեքստերում, կարողանան հմտորեն լուծել առաջացող խնդիրները:

1.3. Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունները

2021 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվել են միջնակարգ կրթության հետևյալ ութ կարողունակությունները.

- 1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,
- 2) սովորել սովորելու կարողունակություն,
- 3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
- 4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
- 5) թվային և մեդիա կարողունակություն,
- 6) մշակութային կարողունակություն,
- 7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,
- 8) տնտեսական կարողունակություն:

Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի՝ սովորել սովորելու կարողունակությունը ներկայացվում է հետևյալ կերպ. *«Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ*

արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում սովորողները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:»⁴

Սովորել սովորելու կարողունակությունը կապված է անձի՝ ինքն իրեն որպես սովորող ընկալելու, սեփական փորձը կառուցելու, անձնական կրթական նպատակներ և խնդիրներ սահմանելու, զարգացման հետագծեր մշակելու և դրանց հետևելու ունակության հետ: Այս կարողունակությունը ներառում է սեփական ուսումնառության կարիքների, առանձնահատկությունների, նախապատվությունների, բարդությունների, աջակցող մեխանիզմների գիտակցում, առկա հնարավորությունների և ռեսուրսների իմացության հիման վրա սեփական անձնային և մասնագիտական զարգացման երկարաժամկետ ռազամավարություն և քայլեր մշակելու կարողություն: Այն ներառում է նաև կյանքի տարբեր իրավիճակներում կենսափորձի վերլուծության, արդյունքների կիրառման կարողություն և ցանկություն, զարգացման հնարավորությունների որոնում, ուսումնառության առանձնահատկությունների, նախընտրելի ոճերի, արդյունավետության գրավականների, օգնող կամ խանգարող միջավայրի, գործոնների իմացություն և բացահայտում:

Այն պահանջում է սեփական կրթական բացերի ու կարիքների բացահայտման գործիքների իմացություն, ձեռքբերումների ամրագրման ունակություն, ինքնագնահատում, ուսուցողական գործընթացի վրա ազդող գործոնների գիտակցում, ուսումնառության հնարավորությունների, աղբյուրների իմացություն և ներգրավման պատրաստակամություն, կարիքահեն ուսուցման պլանավորման ունակություն, սեփական ուսումնական

⁴ՀԴԶ 2021, (II, 2-րդ կետ) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>)

նվաճումների ճանաչման գործիքների իմացություն, ցկյանս կրթության մոտիվացվածություն և իմաստի գիտակցում, սեփական ուսումնական գործընթացի համար պատասխանատվության ստանձնում, ուսումնառության արդյունավետ ձևերի, գործիքների իմացություն և կիրառում:

Այս կարողունակությունը թույլ է տալիս ձեռք բերել, մշակել և յուրացնել նոր գիտելիքներ և հմտություններ, ինչպես նաև ուղղորդել և կողմնորոշել դրանք փնտրելու և պրակտիկ կյանքում օգտագործելու կարողություններ: Անհատները պետք է կարողանան ինքնուրույն կազմակերպել իրենց ուսումը, գնահատել իրենց աշխատանքը և անհրաժեշտության դեպքում խորհուրդ, տեղեկատվություն և աջակցություն փնտրել:

Գլուխ 2

Սովորել սովորելու կարողունակությունը եվ դրա ձևավորումը տարրական դպրոցում

2.1.Սովորել սովորելու կարողունակության նկարագրիչները

Գիտելիք՝

- ուսումնառության նախընտրած ռազմավարությունների իմացություն,
- կրթական կարիքների մասին գիտելիքներ,
- ուսուցման տեսությունների իմացություն,
- ուսումնառության և անձնական զարգացման ժամանակակից մոտեցումներ,
- կրթական համակարգի հնարավորությունների, առանձնահատկությունների, սահմանափակումների իմացություն,
- որտեղ և ինչպես գտնել հնարավորություններ, նյութեր և աջակցություն ուսումնառության գործընթացներում,
- ուսուցման արդյունավետության բարձրացման մեթոդներ,
- կարողությունների ինքնագնահատում, դրանց հիման վրա զարգացման ծրագրերի մշակում:

Հմտություններ՝

- սեփական կարողությունները բացահայտելու,
- բարդությունների հետ առնչվելու, քննադատաբար ինքնավերլուծելու և որոշումներ կայացնելու,
- ինչպես համատեղ, այնպես էլ ինքնուրույն աշխատելու, ուսման արդյունքները գնահատելու և կիսվելու, անհրաժեշտության դեպքում աջակցություն փնտրելու,
- սոցիալական փոխհարաբերություններն արդյունավետ կառավարելու,
- համատեքստը վերլուծելու և սեփական կրթական կարիքները բացահայտելու, կրթական նպատակներ և խնդիրներ սահմանելու,
- սեփական ուսումնառության գործընթացն արդյունավետ և որակյալ կազմակերպելու, խոչընդոտները հաղթահարելու,
- անձնական և մասնագիտական աճը կառավարելու, արտաքին հնարավորություններն արդյունավետ օգտագործելու,
- տարբեր համատեքստերում գիտելիքներն ու հմտությունները կիրառելու,

- ուսման և կյանքի փորձի հիման վրա սեփական կարիերայի աճի հեռանկարներն ու ուղենիշները կանխատեսելու և նախագծելու:

Դիրքորոշում /արժեք՝

- մարդու անձնական, սոցիալական և ֆիզիկական զարգացման, աճի կարևորության գիտակցում,
- ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք,
- ողջ կյանքի ընթացքում սովորելու գործունեություն ծավալելու, հաջողության հասնելու գիտակցում և ձգտում,
- անընդհատ կրթության ներուժի կարևորության ու արժեքի ընկալում,
- անհաջողությունը վերլուծելու պատրաստակամություն, շարունակական անհատական աճի և զարգացման հնարավորության գնահատում,
- ուսումնառության արդյունքները կյանքի տարբեր համատեքստերում կիրառելու հետաքրքրասիրություն:

2.2.Սովորել սովորելու կարողունակությունը ձևավորող վերջնարդյունքները

Հանրակրթության պետական չափորոշչով (ՀՊՉ) սահմանված կարողունակությունները (այդ թվում նաև՝ սովորել սովորելու) ձևավորելու նպատակով սահմանված են համապատասխան վերջնարդյունքներ: ⁵Հանրակրթական **տարրական ծրագրի** շրջանավարտի սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը նպատակաուղղված վերջնարդյունքները.

- դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.
- հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.
- համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործի իր գաղափարները

⁵<https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>: Էջ 3

հիմնավորելու համար և ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով.

- օգտվի պարզ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, աջակցող սարքերից և սարքավորումներից, կարողանա օգտագործել դրանք.
- կարևորի սովորելը և ցուցաբերի հետաքրքրություն սովորելու նկատմամբ.
- ճանաչի տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը.
- ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում.
- գտնի իր սխալները և քայլեր անի դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար.
- դրսևորի իր մտավոր և ֆիզիկական կարողությունները շարունակաբար զարգացնելու վարքագիծ:

2.3. Ինչպես ձևավորել սովորել սովորելու կարողունակություն


Ժամանակակից դպրոցի հիմնական խնդիրն է բացահայտել յուրաքանչյուր աշակերտի կարողությունները, դաստիարակել կյանքին պատրաստ անհատականություններ: Ավելին, կրթության հիմնական բնութագիրը ոչ միայն գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցումն է, այլև ստեղծագործական կարողությունների ձևավորումը, անընդհատ նորը սովորելու պատրաստակամությունը: Քսանմեկերորդ դարի բարձր տեխնոլոգիաների արագ փոփոխվող աշխարհը երիտասարդ սերնդից պահանջում է վճռականություն, պատրաստակամություն և լավ ձևավորված կարողունակություններ և հմտություններ՝ իրենց նպատակներին հասնելու համար: Այս դեպքում ինչպե՞ս օգնել աշակերտներին իրենց տեղը գտնել արագ զարգացող տեղեկատվական աշխարհում: Անհրաժեշտություն է առաջանում նրանց մոտ ձևավորել և զարգացնել սովորելու կարողությունները: Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Երբ մենք արտաքին աշխարհից ստանում ենք տեղեկատվություն, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի մենք կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների, երեխաները պարապ են: Հետևաբար, նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում, աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ,

սերիալներ դիտելով: Նրանք զբաղված են տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր դառնա, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Հետևաբար, սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը ուսացանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են: Այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների, մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերին հաճախ ակնատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ են փոխանցվում: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել: Աշակերտի՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Այստեղից կարելի է կատարել կարևոր եզրահանգում. որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունն այն է, որ այնտեղ մնում է այն գիտելիքը, որը մենք խորքային առումով ենք հասկացել: Այսինքն, այն ամենը, ինչը մենք մակերեսային ենք հասկացել, մնայուն չէ: Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում, դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգկումը, այլև խորությունը: Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անուններ

և թվականներ հիշելու: Իսկ գիտելիքն այսօր էլ կարևոր է, քանի որ, ինչպես շատ դիպուկ նշում է ամերիկացի հոգեբան Դանիել Ուիլինգհամը, եթե չկա գիտելիք, ապա ինչի մասին ենք մենք մտածում: Ուրիշ հարց, որ պարզապես գիտելիք ունենալը բավարար չէ: Բայց առանց գիտելիքի մտածելն էլ վտանգավոր է: Նաև ճիշտ չէ հիշողությունն ու մտածողությունը հակադրելը: Այս մասին էլ Ուիլինգհամը ասել է. «Մենք հիշում ենք այն, ինչի մասին մտածում ենք»: Հետևաբար, մտածողությունն ու հիշողությունը ոչ թե հակադիր բաներ են, այլ փոխկապակցված են: Անընդունելի են գիտելիքի, հիշողության դերը նսեմացնող մոտեցումները: Նոբելյան մրցանակակիր Ջեյմս Ուոթսոնը, որը ԴՆԹ հեղափոխության հեղինակներց է, նշում է. «Երբ ես փորձեցի վերլուծել իմ հաջողության պատճառները, հասկացա, որ դա կապված է իմ գիտելիքների հետ: Ճեղքումների համար պետք են նոր գաղափարներ, բայց դրանց հիմքը գիտելիքներն են: Իսկ գիտելիքներ ունենալու համար պետք է շատ կարդալ»: Սովորելու արդյունքում երեխայի մոտ զարգանում է սովորելու ցանկություն և կարողություն, նախաձեռնողականություն, անկախություն, տարբեր գործունեության մեջ համագործակցելու հմտություններ: Այդ իսկ պատճառով այսօր տարրական դասարաններում փորձ է արվում ուսուցումը կազմակերպել առավելի հետաքրքիր, մոտիվացնող ու գրավող տարբերակով: Դասերը պլանավորելիս հատկապես մեծ ուշադրություն դարձնել՝ ինչպե՞ս սովորեցնել երեխաներին, ինչպե՞ս զարգացնել սովորելու կարողությունը:

Աշակերտների մոտ որպեսզի ձևավորվի այդ կարողունակությունը, դասերը պլանավորում և իրականացնում եմ՝ կիրառելով մի շարք գործիքներ, որոնք նպաստում են այդ կարողունակության ձևավորմանը: Սովորել սովորելու կարողունակությունները ձևավորող դասերը իրականացրել եմ 2-րդ դասարանում, որտեղ սովորում է 34 աշակերտ: Կարողունակությունները ձևավորող դասերը իրակացրել եմ «մայրենի», «մաթեմատիկա», «ես և շրջակա աշխարհը» առարկաների դասաժամերին: Կարողունակությունը ձևավորող մեթոդները, հնարները և գործիքները կիրառել եմ դասի տարբեր փուլերում: **1. Տրայերի մոդելը** շատ արդյունավետ գործիք է նյութը սովորելու համար: Քառաբաժանի կենտրոնում գրում ենք հասկացության, երևույթի, առարկայի անունը: Ապա վերևի ձախ անկյունում գրում եք հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում՝ այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ձախ ներքևի անկյունում գրում ենք օրինակներ, որոնք վերաբերում են այդ հասկացությանը: Աջ ներքևի անկյունում՝ օրինակներ, որոնք չեն

վերաբերում այդ հասկացությանը: Մոդելը կիրառել են դասի խթանման փուլում: Դասի թեմայից կախված կարելի է կիրառել նաև մյուս փուլերում:



2. Գիտելիքի կազմակերպիչներ: Նոր նյութը սովորելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ապացուցված է, որ մարդն ավելի լավ է սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցում է: Նպատակահարմար է գրաֆիկական խմբագրիչները օգտագործել կշռադատման փուլում:

3. Մտքերի հոսք: Նոր նյութը բացատրելուց հետո ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում է գրել, թե ինչ հասկացան նոր նյութից: Այնուհետև ուսուցիչը կարող է շարունակել նյութը բացատրել կամ կարող է առաջարկել կատարել զույգով աշխատանք: Զույգով աշխատանք կատարելու դեպքում աշակերտները միմյանց հետ քննարկում են հետևյալ հարցերը:

- Ի՞նչ ընդհանուր բաներ ենք գրել:
- Կա՞ մի կարևոր բան, որ երկուսս էլ մոռացել էինք գրել:
- Արդյո՞ք որևէ սխալ բան ենք գրել:
- Ինչո՞ւ ենք հատկապես գրել այս բաները:

4. Երկու բան

- Նշեք 2 բան, որ այսօր սովորեցիք:
- Նշեք 2 բան, որ սովորել եք նախորդ դասին կամ անցած շաբաթ:
- Նշեք 2 բան, որ սովորեցիք այս թեմայից:
- Նշեք 2 բան, որոնց մասին կուզենայիք իմանալ ավելին:
- Նշեք ձեր կյանքին վերաբերող 2 բան, որոնք կապված են այսօրվա դասի թեմայի հետ:

5. Վարդ, փուշ, բողբոջ

- **Վարդ:** Նշեք մեկ բան, որ լավ հասկացաք:
- **Փուշ:** Նշեք մեկ բան, որը սովորելիս դժվարության բախվեցիք:
- **Բողբոջ:** Նշեք մեկ բան, որը սովորելուց հետո ձեր գլխում նոր միտք ծագեց:

6. 10 տարի անց : Նշեք մեկ բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից 10 տարի անց:

7. Ինձնից առաջ հարցրու երեք հոգու : Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի պատասխանը:

8. Դասի զեկուցող: Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի՞ մասին էր դասը, ի՞նչ արեցին, ի՞նչ կարևոր բաներ սովորեցին:

9. Անավարտ նախադասություն : Ստորև բերվող կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը: Իր ընտրությամբ, ուսուցիչը կարող է տալ այս նախադասություններից մի քանիսը կամ տալ բոլորը՝ աշակերտներին հնարավորություն տալով իրենց ցանկությամբ ընտրել այն կիսատ նախադասությունները, որոնք կուզենան ավարտել:

Ես այսօր սովորեցի ...

Ինձ զարմացրեց ...

Այսօրվա դասի ամենաօգտակար բանը ...

Ինձ հետաքրքրեց ...

Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ ...

Մի բան, որ չհասկացա ...

Մի բան, որ կուզեի ավելին իմանալ ...

Դասի պլան

Առարկա	մայրենի
Դասարան 2	Ամսաթիվ
Թեմա	Անձնագոհություն
Դասի նպատակ	<ul style="list-style-type: none"> • Ամրակայել տեքստը վերարտադրելու և դրա շուրջ դատողություններ անելու կարողությունները: • Զարգացնել տեքստից հերոսներին և նրանց արարքները բնութագրող արտահայտությունները դուրս բերելու , մեկնաբանելու կարողությունները: <p>Սերմանել կարեկցանք արտահայտելու այն բոլոր վատ երևույթների նկատմամբ, որոնք կարող են պատահել նաև այլ մարդկանց հետ:</p>
Դասի վերջնարդյունքներ	<ul style="list-style-type: none"> • Կկարողանա • Վերարտադրել տեքստը և կատարել վերլուծություններ • Բնութագրել հերոսների արարաքները և հետևություններ կատարել: • Արտահայտել կարեկցանք բոլոր վատ երևույթների նկատմամբ, որոնք կարող են պատահել են այլ մարդկանց:
Միջառարկայական կապեր	Ես և շրջակա աշխարհը, կերպարվեստ,
Դասի սկիզբ	Դասի հարցում, հարց ու պատասխանի միջոցով ամփոփում:
<i>(նշել կիրառվող մեթոդները,</i>	Ֆրայերի մոդելի կիրառում: 15ր

տնտղությունը, ռեսուրսները)	
Հիմնական մաս (նշել կիրառվող մեթոդները, տնտղությունը, ռեսուրսները)	Նոր դասի ընթերցում: Մտքերի դուրս բերում: Արտահայտած կարծիքների մեկնաբանություն, վերլուծություն: Հանգիստ /նկարել երիցուկներ/ 20ր
Ամփոփում (նշել կիրառվող մեթոդները, տնտղությունը, ռեսուրսները)	Կշռադատում գիտելիքի կազմակերպիչ՝ ձկանման գծապատկեր: 10 տարի անց: Նշեք մեկ բան, որը կուզենայիք հիշել այս թեմայից 10 տարի անց: Դասի զեկուցող: 10ր
Տնային աշխատանք	Կարդալ:

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: ՏՏ ազդեցությունից անմասն չի մնում նաև կրթական համակարգը: Նորագույն ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու ավանդական ուղիները: Տեղեկատվական տեխնոլոգիաները աշակերտներին նոր պահանջներ են ներկայացնում: Նրանք հիմնական կարողություններից բացի պետք է ունենան ժամանակի պահանջին համապատասխան հմտություններ՝ համագործակցություն, հաղորդակցում, ստեղծագործական մտածողություն և այլն: ՏՏ-ների կիրառումը լուծում է կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացի մի շարք խնդիրներ, որոնց շարքին են դասվում դասավանդման գործընթացի աշխուժացումը, աշակերտի զգայական համակարգերի օգտագործումը, ճանաչողական գործընթացի կառուցումը աշակերտի անհատական կարողությունների և հմտությունների շնորհիվ: ՏՀՏ-ի արդյունավետությունը լիովին կախված է ինչպես կրթական ծրագրային միջոցների կիրառման որակից, այնպես էլ դրանց ռացիոնալ և հմուտ ներդրումից ուսումնական գործընթացում: Սովորողների մեջ պետք է մշակել դիտելու, համեմատելու , վերլուծելու և

համակցելու տրամաբանական և մոդելավորված մտածողության կարողություններ: Այդ գործընթացում հաղորդվող տեղեկատվությունն օժանդակ դեր պետք է կատարի:⁶ Սովորել սովորելու կարողունակության ձևավորման համար օգտագործում են մի շարք էլեկտրոնային ռեսուրսներ, կրթական կայքեր: Տարրական դասարաններում ավելի նպատակահարմար են գտել օգտագործել ձևավորող գնահատում ապահովող <https://learningapps.org/>, <https://edpuzzle.com/> գործիքը: Օգտվում են հետևյալ կրթական հարթակներից՝ <https://www.imdproc.am/>, <https://sovorir.am/>, <https://kznakhimnadram.blogspot.com/>, <https://hy.khanacademy.org/> և այլն:

⁶Սողոյան Ս. Թորոսյան Մ. Մանկավարժական գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման հիմնական միջոցները և ուղղությունները «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոգվածներ 2017 1(46)

Եզրակացություն

Ժամանակակից ուսուցիչը ոչ միայն երեխային գիտելիքներ է տալիս, այլև սովորեցնում է ինքնուրույն գտնել այդ գիտելիքները և ինքնուրույն կարողանալ բարձրացնել սեփական գիտելիքների և հմտությունների մակարդակը: Տարրական դպրոցական տարիքի երեխաների մոտ սովորել սովորելու կարողունակության զարգացումն անհրաժեշտ է անհատի ամբողջական զարգացման համար: Այս հմտության շնորհիվ մարդը հեշտությամբ կկարողանա լուծել իր առջև ծառացած խնդիրների մեծ մասը թե՛ ուսումնական հաստատությունների ներսում, թե՛ դրանցից դուրս: Երեխայի մոտ ձևավորելով կարողունակություններ՝ մենք ձևավորում ենք մշտական զարգացման, հաջողության հասնելու անհրաժեշտությունը, ինչը կդառնա նոր նպատակների հասնելու շարժիչը:

Սովորել սովորելու կարողունակությունը կարևորագույն կարողունակություններից մեկն է, որ պետք է ունենա 21-րդ դարի սովորողը՝ սովորի սովորել, սովորել ինքնուրույն նպատակ դնել և գտնել ուղիները, ձևավորել վերահսկողության և ինքնատիրապետման հմտություններ, գնահատում և ինքնագնահատում: Կատարելով դասերի ինքնավերլուծություն՝ առանձնացրել եմ դրական և բացասական կողմերը: Այսպիսով՝ նման ձևով պլանավորված դասերում նպատակները և վերջնարդյունքները հստակ են, չափելի և իրատեսական: Դասերի ընթացքում նկատելի է եղել մասնակցության ավելի բարձր մակարդակ, դասերը ավելի ակտիվ են, հազեցած և հնարավորինս կապված մեր կյանքի հետ: Աշակերտների մոտ առաջացրել է բարձր մոտիվացիա: Պարբերաբար նման ձևով պլանավորված և իրականացված դասերի ընթացքում զգացվել է յուրացվածության ավելի բարձր մակարդակ և նաև լավացել է ընթերցելու կարողությունները: Երբ աշակերտները հստակ գիտեն և հասկանում են, թե ինչ է իրենցից պահանջվում, ապա ավելի են կենտրոնանում դասի վրա, ուշադրությունը կենտրոնացված է լինում: Որպես դժվարություն կնշեմ այն հանգամանքը, որ աշակերտները սկզբնական շրջանում ծանոթ չէին գործիքներին և դասի արդյունավետությունը այնքան էլ բարձր չէր: Այժմ ավելի ակտիվ են, համարձակ, վստահ և առանց կաշկանդվելու կարողանում են իրենց հետևությունները դասի վերաբերյալ կատարել: Գործիքները, մեթոդները պետք չէ արագ փոխել, պետք է կիրառել գոնե 2-3 շաբաթ: Ներկայացնում եմ մի քանի գործիքներ, որոնք ձևավորում են այդ կարողունակությունը և կիրառել եմ դասաժամերին: Այսպիսով՝ ուսուցումը միշտ պետք է իր մեջ պարունակի իրավիճակային հարցեր, որը կարող է աշակերտների մոտ համեմատելու, հակասական փաստեր, երևույթներ, տվյալներ համադրելու հնարավորություն տա, այսինքն՝ գործնական առաջադրանքով կամ հարցադրումով առաջ մղել աշակերտներին արտահայտելու տարբեր կարծիքներ: Դասարանում խնդրահարույց իրավիճակների ստեղծումը հնարավորություն է տալիս ակտիվացնել աշակերտների մտավոր գործունեությունը, այն ուղղել նոր գիտելիքների և գործողության մեթոդների որոնմանը: Դասարանում նման համակարգված աշխատանքի

ընթացքում սովորողների մոտ ձևավորում և զարգացնում ենք կանոնակարգող, ճանաչողական, հաղորդակցական գործողություններ: Աշակերտները սովորում են ուղղել իրենց սխալները և հաղթահարել դժվարությունները սեփական գործունեության մեջ, բացահայտել այդ դժվարությունների պատճառները, որոշել իրենց հետագա գործունեության նպատակը, ինքնուրույն ընտրել նպատակին հասնելու միջոցներ և մեթոդներ և փնտրել անհրաժեշտ տեղեկատվություն: Աշակերտները սովորում են նաև համեմատել, վերլուծել, եզրակացություններ անել, ձևակերպել իրենց կարծիքներն ու դիրքորոշումները: Եվ սրանք հենց այն հատկանիշներն են, որոնք անհրաժեշտ են սովորողին 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու համար:

Օգտագործված գրականություն

- 1, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>: էջ 3
2. ՀՊԶ 2021, (II, 2-րդ կես) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788>)
3. <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf>
4. <https://rm.coe.int/prems-000821-arm-2510-reference-framework-vol-1-couv-texte-16x24-web/1680a1b757> , էջ 88
5. <https://elearning.kasa.am/course/view.php?id=156>
6. Универсальные компетентности и новая грамотность: от лозунгов к реальности. М.: Изд. дом ВШЭ, 2020.
7. Սողոյան Ս. Թորոսյան Մ. Մանկավարժական գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառման հիմնական միջոցները և ուղղությունները «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ 2017 1(46)